



ՕՐԱԳԻՐ

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏՆՏԵՍԵԿԸՆ ԵՒ ԲՆԸԿԸՆ

Գ Ի Տ Ե Լ Ե Ա Յ

Ժ. ՏԱՐԻ ԹԻՒ 21 .

1852

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1 .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Աշխարհս խաբերայներով լցուած է 1 :

Որովհետեւ խօսքերնիս խաբուած կարծիքներէ առաջ եկած հակառակութեանց վրայ է, պէտք է հոս զանազաներ մարդկանց մէջ եղած հակառակութեանց այլ և այլ պատճառները, որ կարենանք ճանչնալ խաբուած կարծիքներէ առաջ եկածները, ու ասոնք վերցընելու ջանանք, որոնք են բուն մէկ հատիկ գլխաւոր պատճառները ազգի մը խռովութեան: Եւրդ մէկը ուրիշին ստակը կ'ուտէ, անոր վնաս մը կը հասցընէ. յայտնի է որ վնաս կրողը թշնամի կ'ըլ-

լայ մէկալին դէմ. մէկը յանցանք մը կ'ընէ, և զինքը ազատելու համար ուրիշի վրայ կը ձգէ յանցանքը, այս ալ հակառակութեան պատճառ է. մէկը անկարգութեան ետեւէ կ'ըլլայ, ուրիշները զինքը կ'ատեն, այս ալ է պատճառ հակառակութեան: Ուրիշ այս տեսակ պատճառները թէպէտ խռովութիւն կը ձգեն, բայց աւելի առանձին մարդկանց մէջ. ասոնց վրայ չէ մեր խօսքը: Եւ մենք կը խօսինք այն ընդհանուր խռովութեան պատճառներուն վրայ՝ որ իրարու հետ չտեսնուող մարդիկ, ամուսնի վերջ գերդաստան մը կամ շատ գերդաս-

1 Տես էրես 305 :

տաններ ուրիշներուն հետ հակառակու-
թիւն կ'ունենան . նաև ամբողջ ազգ
մը ուրիշ ազգի դէմ, խաբեբայ և խար-
դախ կոչելով ամբողջ գերդաստանը և
ամբողջ ազգը : Ահա այս յառաջ կու-
գայ միտքը դնելէն թէ աշխարհս խա-
բեբայներով լեցուած է : Արաբեբային
մէկը շատ մարդիկ կը խաբէ՝ ինքը աղէկ
մարդ ձևանալով, և անոնց կը հասկը-
ցնէ՝ թէ այս այն գերդաստանները
խաբեբայ են . անոնք կը խաբուին ու
կը սկսին հակառակութիւն ցուցնել
անոնց դէմ . այսպէսով այն երկու կող-
մը իրարու խաբեբայ կանչելով կը սկը-
սին հակառակիլ, թէպէտ խաբեբայն
մէկ է, բայց ամէնքը խաբուած կ'աղա-
ղակեն իրարու դէմ թէ Աշխարհս խա-
բեբայներով լցուած է : Այսպէս ահա
աշխարհիս խռովութիւնները քանի մը
խաբեբայները կը սկսին, բայց խա-
բուածները առաջ կը տանին ու կը բոր-
բոքեն :

Արեմն հիմա մենք որ իմացանք այս
ճշմարտութիւնը, որչափ որ մեզի հա-
կառակողներ կան, զանոնք ամէնն ալ
չէ թէ խաբեբայ պէտք է ճանչնանք,
այլ բարի՝ բայց խաբուած մարդիկ,
քանի որ անձամբ չենք փորձեր ու չենք
իմացեր՝ թէ անոնց մէջ խաբեբայ մարդ
կայ և ո՞վ է . յայտնի գիտնալով՝ որ ե-
թէ քննելու ըլլանք՝ մէկ քանի մարդ
միայն պիտի գտնենք խաբեբայ, մէկալ-
նոնք ամէնն ալ խաբուած են . և կրնայ
ըլլալ որ երկու կողմը եղողներուն մէջն
ալ գտնուին մէկ երկու խաբեբայներ .
ամէն մարդ այսպէս պէտք է մտածէ, ո-
րովհետև շիտակն այս է : Ո՞րչափ ան-
գամ պատահեր է որ երկու գերդաս-
տաններ իրարու հետ աւրուած, իրա-
րու թշնամի եղեր են, երկու կողմէն
ալ մտքերնին դրած՝ թէ իրենց հակա-
ռակող կողմը խարդախ և խաբեբայ
մարդիկ են . և ետքը դիպուածով մը ի-
րարու միտք հասկըցեր են՝ որ երկու
կողմիներն ալ թէպէտ բարի մարդիկ
են՝ բայց խաբուած են եղեր մէկ խա-
բեբայէ մը :

Ահա կուգայ քեզի քու մտացդ դէմ

կարծիք մը կ'ըսէ . դու քանի որ միտքդ
դրած ես՝ թէ աշխարհս խաբեբայնե-
րով լցուած է՝ մէկէն մտքէդ կ'ըսես . այս
մարդս ալ անշուշտ խաբեբայ է, եկեր
զիս խաբել կ'ուզէ . և եթէ տասը կամ
հարիւր հոգի ալ գան՝ ու անոր ըսածին
վկայես, դու դարձեալ մտքէդ չես փո-
խուիր, ինչու որ՝ կարծես թէ այն տա-
սը և հարիւր անձինքն ալ խաբեբայ են.
և այսպէս անհնարին կ'ըլլայ իրարու
խօսք հասկընալ : Այս երբ յայտնի
գիտնաս թէ աշխարհիս երեսը խաբե-
բայները շատ չեն, այլ խաբուածները
շատ են, մէկէն հաւաստի կ'ըլլաս սրը-
տիդ մէջ՝ թէ այնչափ մարդիկը խա-
բեբայ չեն, այլ լաւ մարդիկ են, բայց
կրնայ ըլլալ որ խաբուած ըլլան : և այն-
պէս հանդարտութեամբ կը սկսիս մտիկ
ընել անոնց ըսածին, քննել, պատճառ-
ներուն ուշ դնել, և մտքէդ անցնել՝
թէ այս մարդիկն որ այսպէս կը հաս-
տատեն, չըլլայ թէ ես խաբուած ըլ-
լամ . անոնք ալ քու վրադ և իրենց վրայ
նոյնպէս մտածելով, առանց հակառա-
կութեան կը խօսիք, սիրով իրարու
պատճառները մտիկ կ'ընէք : Այս
պիսի հանդարտ քննութիւնով ինչ և ի-
ցէ կարծեաց շիտակը կը գտնէք, և ա-
մենևին առանց հակառակութեան խա-
ղաղութեամբ ամէն տեսակ աղէկութե-
պտուղը կը քաղէք . և կը ցաւիք ալ այն
ժամանակներուն վրայ՝ որ այսպէս չը-
նելով որչափ հակառակութիւններ ու-
նեցեր էք, որչափ վնասներ քաշեր էք :
Աշխարհիս սկիզբէն ինչուան այսօր ե-
ղած կռիւները, հակառակութիւննե-
րը, խռովութիւնները, և այս պատ-
ճառներով եղած հոգւոյ և մարմնոյ ան-
թիւ վնասները, թէ քաղաքական և
թէ կրօնական երկպառակութիւնները
մտքերնիդ բերէք, կը տեսնէք որ ամե-
նուն պատճառները եղեր են քանի մը
խաբեբայ և շատ թուով խաբուած մար-
դիկ : Այլ թէ մարդիկ իրարու վրայ աղէկ
կարծիք ունենային, ու ճանչնային թէ
հակառակութեան պատճառները խա-
բուած ըլլալնին է, ու իրարու հետ սի-
րով վարուէին, մէկ երկու խաբեբայնե-

րուն ականջ չգնելով, իրարու միտք հասկընալ ուզէին, և ճշմարտութեամբ խաբեբայ եղողները ճանչնալ և անոնցմէ միայն զգուշանալ ջանային, աշխարհս շատ թշուառութիւններէ ազատ կը մնար. անկարգ մարդիկ ալ չկարենալով զուրիշը խաբել՝ մինակ կը մնային, ու ամենէն անարգուած կը կորսուէին:

Ուստի հիմա պէտք է մեզի որ մեր հակառակորդները չատենք, իրենցմէ չխորչինք, ջանանք անոնց մօտենալ, իրարու միտք հասկըցընել և իրարու միտք հասկընալ, և չթողունք որ ազգերնուս մէջ խաբուած մարդ գտնուի: Բայց պիտի ըսէք որ՝ եթէ մարդիկ իրենց ընկերութեան մէջ խաբեբայներ վրտնուիլը յանձն չեն առներ, միթէ խաբուած ըսուիլը յանձն կ'առնեն: — Այն բայց որովհետեւ ազգի մը և գերդաստանի մը մէջ տարաձայնութիւն ըլլալու համար պէտք է որ ոմանք խաբուած ըլլան, ուստի մէկ ազգ մը երբ կ'ուզէ որ այս տարաձայն կարծիքները իր մէջէն վերցուի, պէտք է որ ամէն մարդ վախնայ իր վրայ մտածելով թէ ազգերնիս խաբուածներով լցուած է, ուստի չըլլայ թէ ես ան ալ խաբուածներէն ըլլամ, թէպէտ և խիղճս ալ կը վկայէ որ խաղաղութիւնը խուովող ու ազգին մէջ տարաձայնութիւն ձգող խաբեբայներէն չեմ. որովհետեւ կը տեսնեմ որ խաբուածներն ալ նոյնչափ չարիք կըրնան եղեր պատճառել ազգիս որչափ որ խաբեբայները: Ենթ որ համար պէտք է որ ամէնքը իրենց կարծիքնին քննեն, իմաստուն մարդկանց քով մօտենան, հանդարտութեամբ հարցընեն, լեն պատճառները: Ե՛հա այս է մէկ հատիկ ճամբայ այս խաբուածութիւնը ազգերնուս մէջէն վերցընելու, և տարաձայնութիւնները դադրեցընելու:

Հիմա մենք այս միտքարութիւնս ալ ունինք որ, որչափ դժուարին է խաբեբայները ճանչնալը, և զանոնք ճամբայ բերելը, այնչափ աւելի դիւրին է խաբուածները ճանչնալ և անոնց խօսք հասկըցընելը, բաւական է որ ամէնքն ալ ազգասէր ըլլան, և ամէնքն

ալ ունենան փափաք խաբուած չմնալու. որոնք քանի մը նշաններով ալ կը ճանչցուին: Ա. Արնան խաբուած ըլլալ խիստ տգէտները, որոնք պէտք է փնտրուեն խաղաղասէր և իմաստուն մարդիկ ու անոնց կարծեացը հետեին: Բ. Խաբուած կրնան ըլլալ պատուասէր մարդիկ, որոնք իրենց պատուէն չլնալու համար չեն ուզեր քննել, շիտակն իմանալ: Գ. Աղմնասէր ու հակառակասէր մարդիկ, որոնք երբ խաբուածներու հողը գոհուին, կարծիքնին փոխելը իրենց ամօթ կը սեպեն: Դ. Արքոս մարդիկ, որոնց կիրքը կ'արգիլէ բանի մը շիտակն իմանալը: Ե. Ի՛նչ մուլութեան մը ծառայող մարդիկ, որ իրենց մուլութենէն ետ չկենալու համար ծուռ կարծիքներնուն վրայ պնդած կը կենան: Զ. Իրենց անձնական շահը միայն մտածող մարդիկ, որ կը վախեն թէ կարծիքնին փոխելուն պատճառաւ կը վնասուին: Ե՛հա այս տեսակ մարդիկ պէտք է տարակուսին իրենց վրայ, ու իրենց առերևոյթ պատճառներնին քննեն, ճանչնալով թէ իրենց պատիւ է և խիստ մեծ առաքինութիւն՝ կարծիքնին փոխելը, յաղթելով իրենց մտայ առջև երևցած խաբէական արգելքներուն: Եթէ ազգերնուս մէջ ամէնքը այս ջանքով աշխատելու ըլլան, ու խաբուած կարծիքները ազգերնուս մէջէն վերցուին, ամէն բարութեանց դռները կը բացուին առջևնիս: Եթէ իրօք խաբեբայները որոշ կը ճանչցուին, և շատ անկարգութեանց ալ դռները կը բացուին, որովհետեւ շատ մարդիկ խաբուելով անկարգութեանց ետեւէ կ'երթան:

Ե՛հա պէս ամէն աղէկութեանց ճամբայները դիւրացընելէն ետեւ, պէտք է որ հոս մէկ ուրիշ ցաւալի ճշմարտութիւն մնալ ըսեմ, որ անոր մէջն ալ խաբուած չմնաք. Խօսքով շատ բաներ դիւրաւ կ'ըլլուին, բայց խօսքով դիւրին եղածները գործքի դալուն պէ՞ որ դժուարին:

